ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 18 § 25 «04» 02 2014թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ընդունելության մրցույթի արդյունքում Երևանի պետական համալսարան ընդունված ուսանողների ընթացիկ ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար սահմանված վարձավճարի չափը հաստատուն է ուսանողի ուսումնառության ամբողջ ընթացքում՝ նույն ուսուցման ձևի և ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքերում:

2. Երևանի պետական համալսարանից հեռացված ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնումը կատարվում է վճարովի ուսուցման համակարգում և նրանց ուսման վարձավճարը սահմանվում է ընթացիկ ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար սահմանված վարձավճարի չափով, եթե ուսանողը համալսարանից հեռացվել է՝

ա) ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով,

բ) անհարգելի բացակայությունների պատճառով,

գ) ուսման վարձավճարը լրիվ կամ մասնակի չվճարելու պատճառով,

դ) համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված պարտականությունները չկատարելու պատճառով:

3. Երևանի պետական համալսարան այլ բուհերից տեղափոխված, ինչպես նաև համալսարանի մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն, կամ հեռակա ուսուցման համակարգից առկա ուսուցման համակարգ տեղափոխված ուսանողների հետ կնքվում է նոր պայմանագիր և նրանց ուսման վարձավճարը սահմանվում է ընթացիկ ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար նախատեսված վարձավճարի չափով:

4. Երևանի պետական համալսարանի տվյալ մասնագիտության առկա ուսուցման համակարգից նույն մասնագիտության հեռակա ուսուցման համակարգ տեղափոխված ուսանողների ուսման վարձավճարը սահմանվում է տվյալ կուրսի համար սահմանված չափով, իսկ տվյալ մասնագիտության հեռակա ուսուցման համակարգից այլ մասնագիտության առկա ուսուցման համակարգ տեղափոխված ուսանողների ուսման վարձավճարը հաշվարկվում է ընթացիկ ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար սահմանված վարձավճարի չափով:

5. Ընդունելության մրցույթի արդյունքում վճարովի ուսուցման համակարգ ընդունված և մինչև բանակ զորակոչվելը ուսման վարձավճարը վճարած ուսանողները զորացրվելուց հետո պահպանում են ընդունելության ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար սահմանված վարձավճարի չափը վճարելու իրավունքը, եթե ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է զորացրվելու օրվանից հետո 1 տարվա ընթացքում:

Ընդունելության մրցույթի արդյունքում վճարովի ուսուցման համակարգ ընդունված և մինչև բանակ զորակոչվելը ուսման վարձավճարը չվճարած ուսանողների զորացրվելուց հետո, նրանց ուսման վարձավճարի չափը սահմանվում է ընթացիկ ուսումնական տարում տվյալ մասնագիտության 1-ին կուրսի համար սահմանված վարձավճարի չափով:

6. Ուսանողի կողմից վճարված ուսման վարձավճարը ուսանողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի և համապատասխան հիմնավորման համաձայն ենթակա է վերադարձման, եթե՝

ա) վճարված գումարի չափը ավելին է տվյալ մասնագիտության համար սահմանված վարձավճարի չափից,

բ) ուսանողն ազատվում է համալսարանից համաձայն իր դիմումի,

գ) առողջական վիճակի պատճառով ուսանողը ձևակերպում է տարկետում,

դ) ԱՏ համակարգից կամ կամավոր ազգային բանակ զորակոչվելու դեպքում, բացառությամբ սույն հրամանի 5-րդ կետով սահմանված դեպքերի,

ե) տեղի է ունեցել ուսանողի կարգավիճակի փոխատեղում (ռոտացիա), ինչի արդյունքում վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողը տեղափոխվել է անվճար ուսումնառության համակարգ և մինչ այդ նախապես վճարել էր ուսման վարձավճարը,

զ) այլ հարգելի պատճառների առկայության դեպքում:

Սույն կետի «բ», «գ», «դ» և «զ» ենթակետերում սահմանված դեպքերում, պահվում է (չի վերադարձվում) ուսանողի կողմից վճարված ուսման վարձավճարի այն մասնաբաժինը, որը համապատասխանում է մինչև ուսանողի համալսարանից ազատվելու մասին հրամանի արձակումը համալսարանի կողմից մատուցված ծառայությունների արժեքին:

7. Կազմակերպությունների կողմից, ավելի վճարված ուսման վարձավճարները կարող են վերադարձվել նույն կազմակերպությունների կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքում՝ փոխանցման կարգով:

8. Եթե սույն հրամանի 6-րդ կետով սահմանված դեպքերում և կարգով վճարված ուսման վարձավճարը հետ չի վերադարձվել, ապա ուսանողական իրավունքները վերականգնելիս նույն կիսամյակի համար վճարման ենթակա գումարից հանվում է նախկինում վճարված գումարի համապատասխան մասնաբաժինը այն ուսանողների դեպքում, ովքեր՝

ա) ԱՏ համակարգից կամ կամավոր զորակոչվել են ազգային բանակ և զորացրվելուց հետո մեկամսյա ժամկետում Երևանի պետական համալսարան դիմում են ներկայացրել իրենց ուսանողական իրավունքները վերականգնելու խնդրանքով,

բ) վերադարձել են սահմանված կարգով ձևակերպված տարկետումից,

գ) համալսարանից ազատվել են իրենց դիմումի համաձայն:

Սույն կետի «բ» և «գ» ենթակետերում նախատեսված դեպքերում և կարգով, ուսանողական իրավունքները վերականգնելիս ուսանողի համար պահպանվում է համալսարան ընդունվելու պահին սահմանված վարձավճարի չափը, որը ենթակա չէ փոփոխման ամբողջ ուսումնառության ընթացքում, եթե ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է համալսարանից ազատվելու օրվանից հետո 3 տարվա ընթացքում:

Սույն կետի «ա» ենթակետում նախատեսված դեպքերում և կարգով, ուսանողական իրավունքները վերականգնելիս ուսանողի համար պահպանվում է համալսարան ընդունվելու պահին սահմանված վարձավճարի չափը, բացառությամբ սույն հրամանի 5-րդ կետով սահմանված դեպքերի:

9. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին (Ա. Գրիգորյան):

10. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել Երևանի պետական համալսարանի աշխատողներին և ուսանողներին:

11. Սույն հրամանի ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 30.08.2013թ. թիվ 154§48 հրամանը:

12. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ